

# ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

## GANTEGH

BULLETIN DU DIMANCHE  
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE  
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



## GANTEGH

SUNDAY BULLETIN OF  
ST. GREGORY THE ILLUMINATOR  
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

[WWW.SAINTGREGORY.CA](http://WWW.SAINTGREGORY.CA)

**ԿԻՐԱԿԻ, 29 Յոկտեմբեր 2017**

*Է ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ Ս. ԽԱՉԻ /ԹԻԻ 30  
ՏՕՆ ԳԻԻՏ ԽԱՉԻ*

**SUNDAY, October 29, 2017**

**7<sup>th</sup> SUNDAY AFTER THE FEAST OF  
THE HOLY CROSS/ NO / 30**



### TODAY'S BIBLE READINGS

1 Corinthians 1:18-24 / Matthew 24:27-36 /

**Պատարագիչ՝**

**ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա. ՔՉՆՅ. ՔԵՐԿԱՆՃԵԱՆ**

*Հոգևոր Հովիւ*

**Celebrant:**

**REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN**

**Pastor**

*Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan, Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan*

*Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian*

**Choirmaster: Miss Lori Antounian**


**Organist: Mr. Karen Manucharyan**

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

secretary@saintgregory.ca | [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## 1 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 1.18-24

**18**Արդարեւ խաչին քարոզութիւնը յիմարութիւն է անոնց համար՝ որ կը կորսուին, իսկ մեզի համար՝ որ փրկուած ենք՝ Աստուծոյ զօրութիւնն է: **19**Որովհետեւ գրուած է. «Իմաստուններուն իմաստութիւնը պիտի կորսնցնեն, ու խելացիներուն խելքը պիտի ջնջեն»: **20**Ո՛ր է իմաստունը, ո՛ր է դպիրը, ո՛ր է այս աշխարհի վիճարանողը. միթէ Աստուած չյիմարացո՞ւց այս աշխարհի իմաստութիւնը: **21**Արդարեւ՝ քանի աշխարհը իր իմաստութեամբ չճանչցաւ Աստուած՝ անոր իմաստութեան մէջ, Աստուած բարեհաճեցաւ քարոզութեան յիմարութեամբ փրկել անո՞նք՝ որ կը հաւատան. **22**որովհետեւ Հրեաները նշան կը պահանջեն, եւ Յոյները իմաստութիւն կը փնտռեն, **23**իսկ մենք կը քարոզենք խաչեալ Քրիստոսը, գայթակղութիւն՝ Հրեաներուն, ու յիմարութիւն՝ Յոյներուն. **24**բայց անոնց որ կանչուած են, թէ՛ Հրեաներուն եւ թէ՛ Յոյներուն, Քրիստոսը՝ Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ իմաստութիւնը

## ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 24.27-36

**27**Քանի որ ինչպէս փայլակը կ'ելլէ արեւելքէն ու կ'երեւնայ մինչեւ արեւմուտք, ա՛յնպէս պիտի ըլլայ մարդու Որդիին գալուստը: **28**Որովհետեւ ո՛ր որ դիակ կայ, հո՞ն պիտի հաւաքուին արծիւները»: **29**«Եւ այդ օրերու տառապանքէն անմի՛ջապէս ետք՝ արեւը պիտի խաւարի ու լուսինը պիտի չտայ իր փայլը. աստղերը պիտի իյնան երկինքէն, երկինքի զօրութիւնները պիտի սարսին, **30**եւ ա՛յն ատեն մարդու Որդիին նշանը պիտի երեւնայ երկինքի մէջ: Այն ատեն երկրի բոլոր տոհմերը պիտի հեծեժեն, ու պիտի տեսնեն մարդու Որդին՝ որ կու գայ երկինքի ամպերուն վրայ, զօրութեամբ ու մեծ փառքով: **31**Եւ ան պիտի դրկէ իր հրեշտակները բարձրաճայն փողով, ու պիտի հաւաքեն իր ընտրեալները չորս հովերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը»: **32**«Թ՛գենի՛ն սորվեցէք առակ մը. երբ անոր ոստերը կակուղնան եւ տերեւները ցցուին՝ կը հասկնաք թէ ամառը մօտ է: **33**Նո՛յնպէս դուք՝ երբ տեսնէք այս բոլոր բաները, գիտցէ՛ք թէ մօտ է՝ դռներուն քով: **34**Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. «Այս սերունդը պիտի չանցնի, մինչեւ որ այս բոլոր բաները ըլլան»: **35**Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնա՛ւ պիտի չանցնին»: **36**«Իսկ այդ օրն ու ժամը՝ ո՛չ մէկ մարդ գիտէ, ո՛չ ալ երկինքի հրեշտակները, հապա՛ միայն իմ Հայրս:

## 1 Corinthians 1.18-24

<sup>18</sup> For the preaching of the cross is to them that perish foolishness; but unto us which are saved it is the power of God. <sup>19</sup> For it is written, I will destroy the wisdom of the wise, and will bring to nothing the understanding of the prudent. <sup>20</sup> Where is the wise? where is the scribe? where is the disputer of this world? hath not God made foolish the wisdom of this world? <sup>21</sup> For after that in the wisdom of God the world by wisdom knew not God, it pleased God by the foolishness of preaching to save them that believe. <sup>22</sup> For the Jews require a sign, and the Greeks seek after wisdom: <sup>23</sup> But we preach Christ crucified, unto the Jews a stumblingblock, and unto the Greeks foolishness; <sup>24</sup> But unto them which are called, both Jews and Greeks, Christ the power of God, and the wisdom of God

## Matthew 24.27-36

<sup>27</sup> For as the lightning cometh out of the east, and shined even unto the west; so shall also the coming of the Son of man be. <sup>28</sup> For wheresoever the carcase is, there will the eagles be gathered together. <sup>29</sup> Immediately after the tribulation of those days shall the sun be darkened, and the moon shall not give her light, and the stars shall fall from heaven, and the powers of the heavens shall be shaken: <sup>30</sup> And then shall appear the sign of the Son of man in heaven: and then shall all the tribes of the earth mourn, and they shall see the Son of man coming in the clouds of heaven with power and great glory. <sup>31</sup> And he shall send his angels with a great sound of a trumpet, and they shall gather together his elect from the four winds, from one end of heaven to the other. <sup>32</sup> Now learn a parable of the fig tree; When his branch is yet tender, and putteth forth leaves, ye know that summer is nigh: <sup>33</sup> So likewise ye, when ye shall see all these things, know that it is near, even at the doors. <sup>34</sup> Verily I say unto you, This generation shall not pass, till all these things be fulfilled. <sup>35</sup> Heaven and earth shall pass away, but my words shall not pass away. <sup>36</sup> But of that day and hour knoweth no man, no, not the angels of heaven, but my Father only.



# Գիւտ Խաչը

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին այսօր՝ Վերացման Սուրբ Խաչի Եօթերորդ Կիրակիին կը տօնէ տարուայ վերջին Խաչի Տօնը՝ Գիւտ Խաչը: Թէեւ վերջինը կը տօնուի, սակայն առաջին Սուրբ Խաչի տօնն է որ կանոնականացուած է: Երբ Կոստանդիանոս Կայսրը եւ իր մայրը՝ Յեղինէն կ'ընդունին



Քրիստոնէական հաւատքը, կը լուծուին Քրիստոնէական աշխատանքի: Յեղինէ Թագուհի կը ծրագրէ ուխտագնացութիւն մը՝ դէպի Երուսաղէմ: Իր մտքին մէջ ունի Սուրբ Տեղերը այցելելու կարգին գտնել նաեւ մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի Սուրբ Խաչափայտը: Երբ Երուսաղէմ կը հասնի, իր հարցուփորձերուն հետեւանքով կը գտնէ Յուդա անուն հրեայ մը, որ գիտէ խաչափայտին տեղը: Յուդա երբ ցոյց կու տայ մեծ աղբանոց մը, ուր մօտաւորապէս երեք հարիւր տարի առաջ նետուած պիտի ըլլար մեր Տիրոջ խաչափայտը: Յեղինէ կը հրահանգէ եւ աշխատաւորներու մեծ բազմութիւն մը կը սկսին փորել: Երբ Յեղինէ կը տեսնէ թէ գործը դանդաղ կ'ընթանայ իր գանձը բերել կու տայ եւ մեջէն ոսկիներ կը նետէ աղբանոցին մէջ ու կ'ըսէ թէ՝ ով որ գտնէ պիտի տիրանայ ոսկիին: Ուստի մարդիկ առաւել արագ կը սկսին փորել: Ի վերջոյ կը գտնուի երեք խաչափայտեր: Որպէսզի գտնեն բուն խաչափայտը, կը կանգնեցնեն նոր մեռեաճ պատանիի մը մահուան թափօրը եւ առնելով պատանիին անշունչ մարմինը կը դնեն խաչերուն վրայ: Առաջինին ոչինչ կ'ըլլայ: Երկրորդին փոքր շարժում մը, իսկ երրորդին պատանին կը վերակենդանանայ: Այսպէսով կը գտնեն Տիրոջ Խաչափայտը եւ զայն մեծ հանդէսով կը տանին Երուսաղէմի տաճարը: Այս դէպքը մինչեւ այսօր կը տօնուի եկեղեցիներուն մէջ:

Սիրելի հաւատացեալներ, Այս հրաշալի դէպքը մեզ կը հրաւիրէ ամէն բանէ առաջ գիտակցելու մեր Քրիստոնէական հաւատքին: Յեղինէ չբաւարարուեցաւ սոսկ հաւատալով, այլ իր հաւատքը գործի վերածեց: Նաեւ Գիւտ Խաչը մեզ կը յիշեցնէ գտնել մեր խաչը: Տէր Յիսուս կ'ըսէ. «Ով որ չի վերցներ իր խաչը ու իմ ետեւէս չի

գար, ինձի արժանի չե>>: Իւրաքանչիւր Քրիստոնեայ ունի իր Խաչը, եթէ սիրով տանինք զանոնք, անոնք պիտի առաջնորդեն մեզի դէպի յաւիտենական կեանք: Զեղինէի օրինակը նաեւ՝ կը սորվեցնէ մեզի թէ ինչպէ՛ս պէտք է գտնենք մեր խաչերը: Ան մեծ գանձ մը գոհեց խաչը գտնելու համար: Մենք ալ եթէ կ'ուզենք գտնել մեր խաչը, պէ՛տք է յանձն առնենք զոհողութիւններ կատարել: Իւրաքանչիւր անձ անպայման զոհողութիւն կը կատարէ զանազան նիւթերու համար: Եթէ անցողականին համար զոհողութիւն կը կատարենք, ինչքա՛ն ակելին պէտք է կատարենք անանցին համար: Զեղինէի օրինակը մեզի ցոյց կու տայ նաեւ՝ ըլլալ համեստ անձեր: Ան որպէսզի գտնէր խաչը, յանձն առաւ աղբերու մէջ մտնել: Թագուհի փառքը մէկ կողմ թողուց: Մենք ալ եթէ կ'ուզենք հետեւիլ խաչեալին, մեր կարծեցեալ փառքերը պէտք է անկիւն մը թողունք ու զարդարուինք համեստութեամբ: Քրիստոնեան խաչեալին անունը կը կրէ: Այս պատճառով է, որ Տէր Յիսուս ղրկեց իր Սուրբ Զոգին, որով կը վերակենդանանանք, կը նորոգուինք եւ վերածուինք խաչեալին: Ան մեզի կու տայ կարողութիւնն ու իմաստութիւնը Յիսուս Քրիստոսի հետեւորդները ըլլալու: Այ՛ս է նաեւ՝ պատճառը թէ՛ արարողութեանց եւ մանաւանդ Սուրբ Պատարագին բազմիցս կը հայցենք Սուրբ Զոգին շնորհներն ու ներգործութիւնը մեր կեանքերէն ներս:

Ուրեմն սիրելիներ,

Բանանք մեր սիրտերը Խաչին վրայ Իր Զոգին երկնաւոր Զօր ձեռքերուն մէջ աւանդող մեր Տիրոջ: Որպէսզի Ան ալ, ինչպէս խոստացաւ, խնդրէ Իր Զօրմէն, որ տայ իր Սուրբ Զոգին մեզի մեր նորոգութեան, զօրացման եւ փրկութեան համար:

Տիրոջ Խաչի զօրութիւնը, Երկնաւոր Զօր սերն ու Սուրբ Զոգւոյ շնորհները մեր բոլորին հետ ըլլան: Ամէն:

*Տ. Եղիա Ա. Քհնյ. Քերվանճեան*

Հոկտեմբեր 29, 2017

## Գիւտ խաչի տօն

Որովհետեւ Աստուածութեան լրիւ ամբողջութիւնը անոր՝ մէջ հաճեցաւ բնակիլ եւ անորմով հաշտեցնել ամեն ինչ իր հետ՝ խաղաղութիւն ընելով խաչի վրայ թափած իր արեամբ ե՛ւ երկրի վրայ, ե՛ւ երկինքին մէջ եղածներուն համար:

Խաչելութենէն եւ Յարութենէն յետոյ Քրիստոսի դատարկ գերեզմանն ու Խաչը Քրիստոսէն մնացած տեսանելի առարկաներէն էին, եւ անոնց վրայ կեդրոնացաւ քրիստոնէաներու մասնայատուկ ուշադրութիւնը, յարգանքն ու հոգածութիւնը:



Ըստ աւանդութեան՝ Զոռմի Կլավդիոս կայսեր (41-54թթ.) կինը՝ Պատրոնիկէն, ըլլալով քրիստոնէայ, ուխտի կ'երթայ Երուսաղէմ, ուր կը հանդիպի այդ ժամանակ Երուսաղէմի առաջին եպիսկոպոս Տեառնեղբայր Յակոբոս առաքեալին: Կայսրուհին կը փափաքի տեսնել Քրիստոսի գերեզմանը, խաչափայտը եւ Գողգոթան, սակայն Յակոբոս առաքեալէն կը տեղեկանայ, որ հրեաները Քրիստոսի Խաչը, Անոր հետ խաչ բարձրացուած երկու աւազակներու խաչերուն հետ, ծածկած էին հողով՝ հսկելով ու արգիլելով մօտենալ անոնց: Պատրոնիկէ կայսրուհիին միջամտութեամբ սուրբ խաչերը կը հանեն հողին տակէն եւ որոշելու համար, թէ որ մէկն է Քրիստոսինը՝ անոնք կը մօտեցնեն մահացած աղջկայ մը: Վերջինս Քրիստոսի Խաչի հպումէն կը կենդանանայ: Յակոբոս Տեառնեղբայրը, բոլորին ի տես եւ ի մխիթարութիւն, Խաչը կը բարձրացնէ Երուսաղէմի տաճարին մէջ եւ, ըստ աւանդութեան, այդ առթիւ կ'երգէ. «Խաչի Քո, Քրիստոս, երկիրպագանեմք» (Շարականը): Եկեղեցական աւանդութեան մէջ սա առաջին դէպքն է, երբ Խաչը հանդիսաւորապէս կը կանգնեցուի՝ փառաւորուելով հաւատաւոր զաւակներու կողմէ: Անոնցմէ շատերը վկաները եղան նաեւ Խաչափայտի վրայ շողացող պայծառ լոյսին: Պատրոնիկէ կայսրուհիին խնդրանքով Յակոբոս Տեառնեղբայրը անոր կը նուիրէ Խաչէն մաս մը, որ կայսրուհին կը տանի Զոռմ: Նուիրական Խաչափայտի անգին այս մասունքը հետագային կ'անցնի անոր ազգականուհի Զոփիսիմէին, որ իր հետ կը բերէ զայն Զայաստան:

Կլավդիոս կայսեր եւ Պատրոնիկէ կայսրուհիի մահէն ետք, հրեաները կը սպաննեն Յակոբոս Տեառնեղբօրը եւ Քրիստոսի Խաչը միւս խաչերուն հետ կը թաղեն Գողգոթայի մօտ վայրի մը մէջ, վրան աղբ կուտակելով՝ վայրը կը վերածեն աղբանոցի: 313 թ. Կոստանդիանոս Մեծ կայսեր (305-337 թթ.) Միլանի հրովարտակով քրիստոնէութիւնը կը ստանայ ազատօրէն դաւանուելու հնարաւորութիւն: Կայսեր մայրը՝ Զեդինէն, 327 թ. կու գայ Երուսաղէմ, եւ մեծ ջանքեր գործադրելով, կը ցանկանայ գտնել Քրիստոսի Խաչը: Խաչափայտին տեղը յայտնի էր միայն Յուդա անունով հրեայի մը, որ իր նախնիներուն գրաւոր աւանդութիւններէն գիտէր խաչերուն թաղման վայրը: Սկիզբը ընդդիմանալով, վեց օր ցամքած ջրհորի յատակը քաղցած մնալէն յետոյ ան, ի վերջոյ, ցոյց կու տայ խաչերուն թաղման տեղը: Փորելով՝ անոնք կը հանեն աղբի տակէն, Պիղատոսի հրամանով կը գտնուի Յիսուսի գլխավերեւը ամրացուած եռալեզու տախտակը, որ, սակայն, պոկուած էր խաչէն: Եւ նորէն Քրիստոսի Խաչը կը որոշուի կատարուած հրաշքի շնորհիւ. խաչափայտի հպումէն կը կենդանանայ մեռած պատանի մը, եւ հիւանդութիւններէն կը բժշկուի մահամերձ կին մը: Այդ հրաշքներու ազդեցութեամբ շատերը քրիստոնէութիւն կ'ընդունին, որոնց մէջն էր նաեւ՝ Յուդան, որ հետագային կը նահատակուի Քրիստոսի անուան համար: Զեդինէ թագուհիին կողմէ 335 թ. Գողգոթայի մէջ կը կառուցուի Սուրբ Յարութիւն տաճարը, ուր եւ կը կանգնեցուի Քրիստոսի Խաչը՝ հանդիսաւորապէս փառաւորուելով արդէն իսկ երկրորդ անգամ: Փրկչական Խաչի գիւտին յիշատակը Զայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կը տօնէ Զոկտեմբեր 26-ի մերձակայ Կիրակի օրը:



Յոկտեմբեր 28, 2017

## Տասներկու Ա. Վարդապետներու յիշատակութեան օր



Յիշատակ Տասներկու Ա.

Վարդապետներու՝ Ռեթեսի,

Դիոնիսիոսի, Սեդեքտորոսի,

Աթանասի, Կիլրեղ

Երուսաղէմացիի, Եփրեմ Խուրի

Ասորիի, Բարսեղ Կեսարացիի,

Գրիգոր Նիւսացիի, Գրիգոր Աստուածաբանի, Եպիփան Կիպրացիի, Յովհան

Ոսկեբերանի եւ Կիլրեղ Ալեքսանդրացիի:

Այս հայրերը կամ վարդապետները եղած են առաքինի կեանքով ու

նկարագրով հռչակուած անձնաւորութիւններ, որոնք եկեղեցւոյ կողմէ

դասուած են սուրբերու կարգը եւ ճանչցուած որպէս

Ընդհանրական եկեղեցւոյ մեծ հայրեր, Սուրբ Գիրքի հեղինակաւոր

մեկնիչներ, քրիստոնէական հաւատքի

ուղղափառ անսխալապահներ: Տասներկու վարդապետներու

գործունէութեան կարեւորագոյն առանցքը ուղղափառ

հաւատքի պահպանութիւնն ու անաղարտ փոխանցումն էր սերունդներուն:

Քրիստոնէութեան հիմնադրման օրէն իսկ գոյութիւն ունեցած են

հերետիկոսութիւններ, հերձուածներ, որոնց հետեւորդները, սխալ

ընկալելով ու մեկնաբանելով Աստուծոյ խօսքը, առաջացուցած ու

զարգացուցած են թիւր պատկերացումներ եւ մոլար ուսմունքներ՝ կապուած

քրիստոնէական վարդապետութեան հիմնարար սկզբունքներու հետ: Բայց

ի հակադրութիւն անոնց՝ եկեղեցւոյ տասներկու վարդապետները,

ամբողջութեան մէջ ըմբռնելով աստուածային յայտնութիւնը, տուած են

վարդապետական առանցքային դրոյթներու եւ սկզբունքներու ճշգրիտ

մեկնութիւնը՝ ուղղափառութեան սահմաններու մէջ զարգացնելով

եկեղեցական աստուածաբանութիւնը: Տասներկու վարդապետներու դերն


ու նշանակութիւնը այսօր առաւել քան երբեւէ անհրաժեշտ են

մեր հասարակութեան համար, ուր որ ներթափանցած են Սուրբ Գիրքի

կամայական մեկնիչներ, որոնք Աստուծոյ խօսքի՝ իրենց ոչ ճիշտ



ընկալումներն ու պատկերացումները պատուաստած են մեր ժողովուրդի գաւակներուն մտայնութեան մէջ՝ հեռացնելով անոնց ո՛չ միայն իրական, ճշմարիտ փրկութեան ճանապարհէն, այլեւ մեր ազգային գիտակցութենէն, Աստուածաշունչ մատեանի ուղղափառ մեկնութեամբ ձեւաւորուած մտածողութենէն, անոնց հետ մեկտեղ՝ նաեւ՝ ազգային դիմագիծէն ու նկարագիրէն: Ուստի, այս տօնը մեզի համար եւս մէկ պատեհ առիթ է արժեւորելու մեր նախնիներուն թողած հարուստ ժառանգութիւնը՝ հաւատարիմ մնալով մեր եկեղեցւոյ եւ Քրիստոսի Եկեղեցիին Ս. Զայրերուն լոյս հաւատքին: Զայ Առաքելական Ս. Եկեղեցին Տասներկու Ս. Վարդապետներու ինկելի յիշատակը կը ոգեկոչէ Խաչվերացի 2 Կիրակիին յաջորդող շաբաթ օրը:



2017-10-28

Commemoration of the Twelve Archimandrites – Sts. Retheos, Dionisios, Selbestros, Athanas, Cyril of Jerusalem, Ephrem Khourie Assyrian, Vasil (Barsegh) of Caesaria, Gregory of Nyssa, Gregory the Theoloegian, Epiphan of Cyprus, John Chrysostom and Cyril

Commemortaion of the Twelve Archimandrites – Sts. Retheos, Dionisios, Selbestros, Athanas, Cyril of Jerusalem, Ephrem Khourie Assyrian, Vasil (Barsegh) of Caesaria, Gregory of Nyssa, Gregory the Theoloegian, Epiphan of Cyprus, John Chrysostom and Cyril of Alexandria

Those Archimandrites (Holy Doctors) or Church Fathers (Hierotheus of Athens, Dionysius of Areopagite, Silverst of Rome, Athanasius of Alexandria, Cyril of Jerusalem, Ephraem the Syrian, Barsegh (Vasil) of Caesaria, Gregory of Nyssa,

**Gregory of Nyssa, Gregory the Theologian, Epiphanius of Cyprus, John Chrysostom and Cyril of Alexandria) have been famous for leading a pious and devote life and are considered to be the Fathers of the Universal Church, respectable interpreters of the Holy Bible and orthodox maintainers of the Christian Faith.**

**The main goal of the twelve Church Fathers' activity was maintenance and passing to the coming generations the orthodox faith Heresies and sects and their followers have existed since the existence of Christianity. They have falsely comprehended and interpreted the Word of God, have set forth and developed false and misleading teachings related to the fundamental principles of Christianity. In contrast to them, the twelve Church Fathers, comprehending the divine revelation in the whole, have provided the true interpretation of the doctrinal key points and principles and have developed ecclesiastical theology. The role of the twelve Church Fathers is at present especially important for our society, where various false interpreters of the Holy Bible have intruded.**

**2017-10-29**

## **Feast of the Discovery of the Holy Cross**

**The Feast of the Discovery of the Holy Cross is one of the four feasts dedicated to Christ's Holy Christ.**

**In 327 AD Heghineh, the Mother of the Byzantine King Kostandianos, visits Jerusalem with the aim to search the holy Cross of the lord. A Jew, named Judas, helps the King's mother to search the site where Christ was**

**crucified – Golgotha. In the result of searches the wooden crosses of Christ and the two criminals crucified together with him are found. For recognizing the Lord's Cross, the remains of a young man are put on the crosses in turn. On one of the crosses the young man**




rises to life and thus the Lord's Cross is identified. After that miracle the Jew converts to Christianity and later becomes the Bishop Cyril of Jerusalem. After the discovery of the Holy Cross Heghineh renovates the Holy Places of Jerusalem and builds the Church of Holy Resurrection of Golgotha, where later the Lord's cross is installed.

The Armenian Apostolic Church celebrates the Feast of the Discovery of the Holy Cross on the Sunday during the period October 23-29.

## ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL

### ԿԻՐԱԿԻ, 29 Հոկտեմբեր 2017

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ ՊԻՏԻ ՄԱՏՈՒՑՈՒԻ

ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԱՆԴԱՐՁ  
ԱՆԴԱՄՈՒՀԻՆԵՐՈՒ ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ



ԵԻՆԻԿԷ ԳԱՐԻՊԵԱՆ  
ՍՕՖԻ ՊԷԼԿԻՆ  
ԻՍԿՈՒՀԻ ՀԱԶԱՐԵԱՆ  
ՀԱՅԿՈՒՀԻ ԿՈՒՏՍՈՒՉԵԱՆ  
ԱՆՆԻԿ ԱՂԱՍՕՂԼՈՒ  
ՍԻՐԱՆ ՄԱՆՈՒԿՅԵԱՆ

ԷԼԻՉ ԹԱՇՃԵԱՆ ԱՐԱՊԵԱՆ  
ՇՈՒՇԱՆ ԲՐՈՒՏԵԱՆ  
ԱՐՇԱԿՈՅՍ ՄՈՒՐԱՏԵԱՆ  
ԼԻՒՍԻ ՓԵԼԹԷՔԵԱՆ  
ՄԵՐՍԷՏԷՍ ՍԱՐԱՖԵԱՆ  
ԼԻՒՍԻ ԳԱՄՊՈՒՐԵԱՆ  
ԶԱՐՈՒՀԻ ՀԱՐՄԱՆՏԱՐԵԱՆ  
ՌԵՊԵՔԱ ԹԱՇՃԵԱՆ  
ՎԱՐԴՈՒՀԻ ՀԱՃԻԳԸԶԵԱՆ  
ԱՐԱՔՍԻ ԿՐԷՅՍ ՇԻՐՈՅԵԱՆ  
ՍԻՒԶԱՆ ԷՍՍԷՆ  
ՌՕԶ ԹԱԹԻԿԵԱՆ  
ԱՆՆԱ ՊԵՏԻՐԵԱՆ - ՊԵՏԵԻԵԱՆ  
ՄԱՆՆԻԿ ՄԵԼԻՔԵԱՆ  
ՄԱՅՏԱ ՑՆԾԱԼԵԱՆ  
ԱՆԳԻՆԷ ՇԱՔԱՐԵԱՆ  
ԱՆԱՀԻՏ ԹԱԹԷՈՍԵԱՆՆ  
ԱՐՓԻՆԷ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
ՀՈՒՓՍԻՄԷ ՔԷՇԻՇԵԱՆ  
ԼԻՒՍԻ ՔԷՍԹԷՔԵԱՆ  
ՎԵՐԳԻՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ  
ՍԻՐԱՆՈՅՇ ՔԷՕՐՀԱՃԵԱՆ  
ՄԱՔՐՈՒՀԻ ՄԸԿԸՐԵԱՆ  
ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԵԼՔՈՆԵԱՆ  
ԱԼԻՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ  
ՍԵՂԱ ԿՈՒՏՍՈՒԶԵԱՆ  
ԲԵՐԿՐՈՒՀԻ ՉԷՕՍԼԷՔՃԻՕՂԼՈՒ  
ԱԼԻՍ ԳԱՐԱԳԱՇ  
ՀԱՅԿԱՆՈՅՇ ԿԷՐԻՔԵԱՆ

ՄԵԼԻՆԷ ՇԻՐԻՆԵԱՆ  
ՄԱԹԻԼՏ ԳԱՐԻՊԵԱՆ  
ԱՐԱՔՍԻ ԿԱԶԵՐԵԱՆ  
ՆԱՏԻԱ ԲՕԼԱԹ  
ԳՈՀԱՐԻԿ ԹԵՐԶԵԱՆ  
ԱՆԱՀԻՏ ՄԻՆԱՍՕՂԼՈՒ  
ՀԱՅԿՈՒՀԻ ԳԱԶԱԶԵԱՆ  
ՄԱՔՐՈՒՀԻ ԿՈՉԵԱՆ  
ԹԷՓՕՐԱ ԹԱԹՈՒԼԵԱՆ  
ԺՈՒՍԹԻՆ ԱՐԹԻՆԵԱՆ  
ԱՐԱՔՍԻ ԳՕՃՈՅԵԱՆ  
ԱՐՇԱԼՈՅՍ ՄԷՆԷՆՏԵԱՆ  
ԻՄԱՍՏՈՒՀԻ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ



Տիար Արի Գարաարթինեանի,  
Տիկ. Զեթի Քիրիաքիտիսի,  
Տիկ. Աֆրօտիթի Յալէբլիօղլուկի,  
Տիար Նիքո Քիրիաքիտիսի,  
Տիկ. Էօժէնիա Նանասի,  
Օրդ. Աթինա Մանթիօղլուկի,  
Օրդ. Զեթի Մանթիօղլուկի,  
Օրդ. Էֆթիմիա Գարաարթինեանի,  
Տիար Զօւթա Քիրիաքիտիսի,  
Տիար Լուքաս-Արման Գարաարթինեանի,  
Տիար Բարասքէլաս-Այուլաննիս Գարաարթինեանի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի

իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝

**ԱԹԻՆԱ**

**ՕԶԱՆ ԳԱՐԱԱՐԹԻՆԵԱՆԻ**

**(ATHINA OZAN KARAARTINYA N)**

մահուան առաջին տարելիցին առիթով

**ՇԱՀՆՈՒՐ ԱՐՄԱՆ**

**ԳԱՐԱԱՐԹԻՆԵԱՆԻ**

**(SHAHNUR ARMAN KARAARTINYA N)**

մահուան 14-րդ տարելիցին առիթով



Տիկ. Ռիդա Աւետիսեանի եւ դուստրին՝ Զուռիի,,

Տ. եւ Տիկ. Սիլվա Ազիրեան Լաֆէյի,

Տ. եւ Տիկ. Լենա եւ Ճօն Սթիմսընի,

Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի

իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝

**ՇԱՔԷ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ**

**ԱԶԻՐԵԱՆՆԵՐՈՒ**

**(CHAKE & HAROUTIOUN AZIRIAN)**

Յոգիներուն ի հանգիստ

Ինչպէս նաեւ՝

**ԱԶԻՐԵԱՆ, ԱԲԵՏԻՍԵԱՆ, ԵԱԼԸՆԸԶԵԱՆ**

**ԵՒ ԱԲԵՏԻՔԵԱՆ**

(AZIRIAN, AVEDISSIAN, YALENEZIAN,  
& AVEDIKIAN FAMILIES)

Գերդաստաններու համայն ննջեցելոց  
հոգիներուն ի հանգիստ



*a prayer for patience*

Lord, we live in a culture that wants everything, and wants it yesterday. Help us break free from this way of living. Help us be counterculture. Today, we ask you to replace our restlessness with patience, contentment and peace. We release whatever we're feeling impatient about into your hands and trust that your timing is perfect. We turn away from selfish striving to embrace simply abiding in you. In Jesus' name, Amen.

*lauren  
gaskill*



Սիրելի հաւատացեալներ,  
 Անոնք որոնք կը փափաքին, որ  
 Հոգեւոր հովիւը այցելութիւն  
 կատարէ իրենց հիւանդ  
 ընտանեկան պարագաներուն կամ  
 հարազատներուն, Եկեղեցոյ Հովիւր՝



Արժ. Տ. Եղիա Ա. Քինյ. Քերվանճեան պատրաստէ  
 անմիջականօրէն իր այցելութեամբ ընդառաջելու  
 ձեր փափաքին:

Հաճեցէք կապ պահել՝ Տէր Հօր հետ  
 հեռաձայնելով՝ (514) 241-9347 կամ  
 Եկեղեցոյ գրասենեակ  
 (514) 279-3066

**FAMILY PRAYER**

*God made us a family  
 We need one another  
 We love one another  
 We forgive one another  
 We work together  
 We play together  
 We worship together  
 Together we use God's word  
 Together we grow in Christ  
 Together we love all men  
 Together we serve our God  
 Together we hope for Heaven  
 These are our hopes and ideals  
 Help us to attain them,  
 O God, Through Jesus Christ  
 our Lord*

800-036

Dear  
 Parishioners,  
 If you have  
 family



members or relatives that you wish to have  
 spiritual support, our Pastor Arch. Fr. Yeghia  
 Kervanjan is ready to fulfill your wish and  
 visit them, when and where is needed.

Please feel free to contact Der Yeghia directly  
 at (514) 241-9347  
 or call the secretariat of the Church at (514)  
 279-3066





## ՏՆՕՐՅՆԷՔԻ ԱԲԱՆԴՈՅԹՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՅԹԸ



Տնօրհներք փափաքող  
հաւատացեալները  
կրնան հեռաձայնել Տ.  
Եղիա Ա. Քհնյ.  
Քերվանճեանին՝

(514) 241-9347 կամ

Եկեղեցւոյ գրասենեակ՝

(514) 279-3066

### The Tradition of Home Blessing

The home is blessed for dedication or rededication, a reminder that the home reflects the Kingdom of God. Traditional times of the year for Armenian homes to be blessed are Eastertide (the 50 days following Easter), Christmastide (until February 14, the Feast of the Presentation), and after having moved into a new home.


At a Home Blessing, every member of the family assembles with the priest to sanctify together three life-giving gifts: bread, water, and salt. It is a custom for the priest to bring with him a *nushkhar* as a symbol of the presence of God's blessing.

To request a Home Blessing, please contact with Fr. Yeghia

at (514) 241- 9347 or church office at (514) 279-3066.



# Աստուածաշունչի Սերտողութիւն Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ



Եկէ՛ք միացէք մեզի  
ամեն Զինգշաբթի երեկոյեան ժամը  
7:00-ին, մասնակից ըլլալու մեր  
հետաքրքրական Աստուածաշունչի  
Նիւթերուն եւ ընկերային  
միջավայրին:



Աստուածաշունչի սերտողութեան  
խումբը՝ ընկերային ջերմ  
մթնոլորտի մէջ հաճելի ժամանակ  
կ'անցնէ, Տ. Եղիա Ա. Զհնյ.  
Քերվանճեանի՝ բժախնդրօրէն  
պատրաստած  
Աստուածաշնչական նիւթերու  
հետաքրքրական ճիւղ  
գիտելիքներով:





**Ուշադրութիւն մեր սիրելի հաւատացեալներուն,  
Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն,  
հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ  
քարտուղարութեան (514) 279-3066, մեր  
հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար  
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:  
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

***Հովիւ եւ Ծխական Խորհուրդ***



Attention to our beloved parishioners,  
**If you have changes in your address, e-mail or phone numbers  
please feel free to convey your new data to the Church office at  
(514) 279-3066, to maintain our communication in a regular,  
continuous, and up-to-date course.  
Thank you for your cooperation.**

***Pastor and Parish Council***

# ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ

**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

*Saint Gregory the Illuminator Armenian  
Cathedral of Montreal  
Donations of October 2017  
have been received with great appreciation*



## GENERAL CHURCH:

Mr. John Satouri \$100, Mr. Manvel Markosyan \$40.

## ELEVATOR FUND

Mr. & Mrs. Aret Tasciyan \$100.

## HOKEHANKISD:

### THE LATE AGOP SAROYAN

Mr. Vrej Nigogosian \$250, Mrs. Seta Saroyan \$100,  
Mr. & Mrs. Nazareth & Nadine Mekhgeavakian \$60,  
Mr. Toros Kilavuz \$50, Mr. Sarkis Gurnagul,  
Mr. Robert Kilavuz, Mr. Norayr Gurnagul, Mrs. Srpuhi Migirditsyan \$25.

## THE YERVANT BECHAKEJIAN

Mr. & Mrs. Asbed & Mirna Bajakian \$100.

## THE LATE HAIG VAROSIAN & KEVORK SUKIASSIAN

Nina & Zina Varosian \$40.

## THE LATE DATEVIK SUMBULIAN ATTARIAN

Ms Lucy Sumbulian \$500, Mr. Viken Attarian \$200.



## Եկեղեցւոյ Ձեռնարկներ

Տարեկան Պազար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 28 եւ 29, 2017  
Համերգ Լին Անոյշ Իշնար – Կիրակի, 26 Նոյեմբեր 2017 երեկոյեան  
Ժամը 6-ին Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ  
Մանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 3 Դեկտեմբեր 2017  
Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 47-րդ Տարեդարձ –  
Կիրակի, 10 Դեկտեմբեր 2017

### UPCOMING EVENTS

Annual Bazaar – Saturday & Sunday- October 28 & 29,  
2017

Concert Lynn Anoush Isnar – Sunday, November 26, 2017  
at 6:00 pm in St-Gregory the Illuminator Armenian  
Cathedral

Children's Christmas /CFFA –  
Sunday, December 3<sup>rd</sup>, 2017

Church 47<sup>th</sup> Anniversary – Sunday, December 10<sup>th</sup>, 2017



**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**



# **ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԽՐԱԽՃԱՆՔ**

**Շաբաթ, 10 Փետրուար 2018**

**Մանրամասնությունները  
յաջորդիվ**

# **POUN PAREGENTAN PARTY**



**BAL MASQUE**

**Saturday, February 10, 2018**

**The details will be followed**



**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի**  
**Cathédrale Arménienne St-Grégoire l'Illuminateur**  
**St. Gregory the Illuminator Armenian Cathedral**

---

Կազմակերպությունը՝

**ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ**



**Տ Ա Ր Ե Կ Ա Ն**

**ՊԱԶԱՐ**

Պատույ Հիւր՝

**Ազնուափայլ Տիկին Սօնա Տէմիրճեան**

---

**Շաբաթ 28 եւ Կիրակի 29 Հոկտեմբեր 2017**  
**Ժամը 10:00-էն**

---

**Ձեռային աշխատանքներ**

**Անուշեղէններու եւ խմորեղէններու վաճառք**  
**Երկու օրերուն՝ ճաշի սպասարկութիւն**

---

**Յատկեալ մանրամասնութեան համար հեռաձայնել**  
**Եկեղեցոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին**



# CONCERT

Under the Auspices of  
**BISHOP ABGAR HOVAGIMYAN**  
Primate of the Armenian Holy Apostolic Church Canadian Diocese

Performed by **Famous Soprano**

**Lynn Anoush Isnar**

Invited from Toronto

## ՀԱՄԵՐԳ

Հովանաւորութեամբ՝  
ԳԵՐՇ. Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ  
Առաջնորդ Գանատահայոց Թեմի

Կատարողութեամբ՝ **Համբաւաւոր Սոփրանօ**

**Լին Անոյշ Իշնարի**

Հրաւիրուած Թորոնթոյէն

**Sunday, November 26, 2017**

at 6:00 pm

**Կիրակի, 26 Նոյեմբեր 2017**

երեկ. ժամը 6-ին

**In St. Gregory the  
Illuminator Armenian  
Cathedral**

**Ս. Գրիգոր Լուսաւորիչ  
Առաջնորդանիստ  
Եկեղեցոյ մէջ**

615 Stuart, Outremont, QC H2V 3H2  
Tel.: 514 279-3066



Donation \$25  
Reserved Seats \$50

Սուտքի նուէր՝ \$25  
Թուագրեալ տեղեր՝ \$50







# Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի

St. Gregory the Illuminator Armenian Cathedral

## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6-12 տարեկան երեխաներու համար

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

Կիրակի, 10 Սեպտեմբեր 2017

# SUNDAY SCHOOL

On Sunday, September 10, 2017

For the ages of 6-12 years old children

Երեխաները հաճելի եւ ընկերային մթնոլորտի մեջ կը սորվին Սաղմոսներ եւ երգեր, կը զարգացնեն Հայերէն լեզուն եւ կը ծանօթանան Հայոց Պատմութեան:

Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար հեռաձայնել՝

Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066

Տէր Եղիա Ա Քհնյ. Զերվանճեանին (514) 241-9347



In a pleasant and friendly atmosphere, the children will learn Psalms & songs, develop Armenian language skills, & introduce to Armenian history.

Fun & fascinating consecutive Fieldtrips

For more information and registration call to the Church office (514) 279-3066

Archpriest Fr. Yeghia Kervanjian (514)241-9347

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008  
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjian: (514)241-9347  
E-Mail: [secretary@saintgregory.ca](mailto:secretary@saintgregory.ca), [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)  
Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



# ԴՊՐԱՑ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

## **Ս. Գրիգոր Լուսալորիչ Առաջնորդանիստ Եկեղեցույ**

**Հոգեւոր Հովիւն ու Դպրաց Դասի Վարչութիւնը**

**Կը յայտնեն թէ իսկ սկսած են դպրաց  
պատրաստութեան  
Հանդիպումները**

**Այն պատանիներն ու երիտասարդները,  
որոնք կը փափաքին ծառայել  
Հայց. Առաք. Եկեղեցույ Սուրբ Խորանին եւ մաս կազմել  
Ս. Գրիգոր Լուսալորիչ Եկեղեցույ Դպրաց Դասին կը  
խնդրենք**

**հեռաձայնել՝ Եկեղեցույ Հովիւին (514) 241 -9347  
Կամ Եկեղեցույ գրասենեակ՝ (514)279-3066:**

**Հոգեւոր Հովիւ  
Տէր Եղիա Ա Քհնյ. Քերվանճեան**

# ՄԱՅՐ ՏԱԾԱՐ



# Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



## ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Սիրելի հաւատացեալներ, ԽՈԿՄԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ  
ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ արդէն իսկ տեղի  
կ'ունենան ամէն Զինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին,  
Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ  
Եկեղեցւոյ մէջ:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս  
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն  
ընթացքին միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ  
Գիրքը, Եկեղեցւոյ հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն  
ու մասնակցութիւնը Եկեղեցւոյ կեանքին մէջ եւ  
վերջապէս պատասխան գտնել մեզ յուզող  
հարցումներուն ու մտահոգութիւններուն:

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Աղօթարար՝

S. Եղիա Ա Քհնյ. Բերվանճեան


615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066  
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjan: (514) 241-9347

## ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միքելի Հասարացեալներ, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

### CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.



- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.